

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՑԻ «ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Հովհ. եպս. Շահխաթունյանցն իր «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատության Ա և Բ հատորներում (Վաղարշապատ, 1842), զանազան առիթներով, հաճախ առանց մատենագիտական տվյալների և առանց պատկան հավաքածուի մատնանշման, հիշատակում է հետևյալ 21 ձեռագրերը (պայմանականորեն №№ 1—21).

1 (Հատոր Ա, էջ 49). «[Ժողովածու]», ժամանակ՝ ՌՃԽԱ (1692), տեղ՝ Նոր Ջուղա, գրիչ՝ Ազարիա: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 412, Էջմիածին № 420, Մատենադարան № 451:

2 (Հատոր Ա, էջ 60). «Պատմութիւն սուրբ Գեղարդայ»: Շահխաթունյանցը նշում է, որ այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է և կորել է դարասկզբի ռուս-պարսկական ընդհարումների ժամանակ:

3 (Հատոր Բ, էջ 129). «Աւետարան», ժամանակ՝ ՉԿԷ (1318), տեղ՝ Եղիվարդ, ստացող՝ Պարոն Ազիզբեկ: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 231, Էջմիածին № 238, Մատենադարան № 356:

4 (Հատոր Բ, էջ 200). «Փիլիպպոս Պարոնտէր կոչեցեալ (առաջնորդ Կեչառիսի), որ ի յիշատակարանի Մաշտոց գրոց յաւուրս Թադէոս կաթուղիկոսի, այլ յառաջնոյն թէ երկրորդին չէ յայտ, ուստի ասել իբր յամսն 1498, 1575»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 1010, Էջմիածին № 1028, Մատենադարան № 1039:

5—7 (Հատոր Բ, էջ 217, տողատակ ծանոթագրություն). «Կանոն սրբոյն Բարսղի (Ցաղագս հարցողաց սրբոյն Բարսղի), յորմէ երեք լիակատար օրինակք գտանին ի գրանոցի Աթոռոյս Էջմիածնի...»: Խոսքը Կարենյանց №№ 854, 1416, 1890, Էջմիածին №№ 871, 1452, 1932, Մատենադարան №№ 829, 1880, 1924 ձեռագրերի մասին է:

8 (Հատոր Բ, էջ 257). «Քեռթուկ... Սիւնեաց արքեպիսկոպոսարանի»: Այն Տաթևի նախկին գրատան ձեռագրերից է (Գ. Շերմազանյանց № 141, Մ. Սմբատյանց № 62, Ն. Տեր-Ավետիքյան № 107, Խ. Մուրադբեկյան № 46)[1] և բովանդակում է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն Սիւնեաց» աշխատությունը: Մեսրոպ արքեպս. Սմբատյանցն իր «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ...» (Տփխիս, 1904) աշխատության մեջ անդրադառնալով սույն գործին, գրում է. «Այս Պատմութիւն անուանի ի Տաթև «Արմատ» (Քեռթուկ), որոյ յատուկ անուանց ցանկն ես կազմեցի 1866 թիւն» (անդ, էջ 127): Մատյանս «Քեռթիւկ Տաթևու» է անվանել նաև Սարգիս արքեպս. Ջալալյանցն իր «Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքի Բ հատորում (Տփխիս, 1858, էջ 270): Այն 1910 թվականին ի շարս վանքապատկան մյուս ձեռագրերի Խորեն արքեպս. Մուրադբեկյանի միջոցով թեև փոխադրված է եղել Էջմիածին, սակայն ինչ-

[1] Տես մեր «Տաթևի գրատան ձեռագրերը» («Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 417—432):

ինչ հանգամանքներում ընկել է Տիրայր վրդ. Տեր-Հովհաննիսյանի ձեռքը և միայն բաանական թվականների վերջերին կրկին մուտք գործել Մատենադարան (արդի № 6271):

9 (Հատոր Բ, էջ 290). «Տէր Յովհաննէս (առաջնորդ Այրիվանից) յիշատակեալ ի յիշատակարանի Աւետարանի միոյ յամի 1475»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 252, Էջմիածին № 259, Մատենադարան № 221:

10 (Հատոր Բ, էջ 290—291). «Ստեփանոս եպիսկոպոս (առաջնորդ Այրիվանից), զի ի յերկրաշարժութեանն յամի 1679 եղև ընդ փլատակաւ եկեղեցւոյն անապատին Անանիա առաքելոյ յԵրևան: Դաւիթ եպիսկոպոս (առաջնորդ Այրիվանից)... յիշատակին ի յիշատակարանի Յայսմաւուրի միոյ եղելոյ ի գրանոցի Աթոռոյ սրբոյ Էջմիածնի»: Խոսքը Կարենյանց № 1463, Էջմիածին № 1501, Մատենադարան № 1512 ձեռագրի մասին է:

11 (Հատոր Բ, էջ 295). «Տէր Յովհաննէս (առաջնորդ Հաւուց թառի) յամի 1658, յիշատակեալ ի յիշատակարանի Աւետարանի միոյ»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 269, Էջմիածին № 371, Մատենադարան № 338:

12 (Հատոր Բ, էջ 296—297). «Ստեփանոս (առաջնորդ Հաւուց թառի) յամի 1696, որ գրի ի յիշատակարանի Տօնացոյց գրոց գրեալ ի սոյն մենաստանի»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 2029, Էջմիածին № 2072, Մատենադարան № 2029:

13 (Հատոր Բ, էջ 326—327). «Կազմեցաւ Շարակնոցս ի թուականիս Հայոց ՌՁԵ (1636)... ի առաջնորդութեան Գողթան գաւառի սուրբ ուխտիս Թումայի... Տէր Խաչատուր վարդապետաց վարդապետի... Նկն... Սօլթան Մուրատն ի վերայ պարսից... և էառ զամուր բերդն Երևան...»: Նման տվյալներով Շարակնոց մեզ չի հաջողվել գտնել ոչ Մատենադարանի ձեռագրերի շարքում, ոչ էլ եղած տպագիր ձեռագրացուցակներում:

14—15 (Հատոր Բ, էջ 330). «...ունէաք ի ձեռին զերկուս օրինակս Պատմութեանն ի Մովսիսէ Կաղանկատուացւոյ. Ա օրինակն... իբր յամի Տեառն 1279 (ուղղելի՝ 1289)»: Խոսքը վերաբերում է Կարենյանց №№ 1640, 1679, Էջմիածին №№ 1682, 1721, Մատենադարան №№ 1531, 1725 ձեռագրերին:

16 (Հատոր Բ, էջ 344). «Տէր Առաքեալ ևս Սօկոլուեցի (կաթողիկոս Աղուանից). յիշատակի սա ի յիշատակարանի Աւետարանի միոյ եղելոյ ի թուին ՋԻԸ (1479), ՋԾԳ (1504): Այն Վարդաշենի ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերից է՝ արձանագրված Մակար եպս. Բարխուդարյանցի «Աղուանից երկիր և դրացիք» աշխատության մեջ (Թիֆլիս, 1893, էջ 259, № Գ): Բարխուդարյանցը ՋԻԸ (1479) թվականը կարդացել է ՋԽԸ (1499): Ձեռագրիս հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ: Դոկտոր-պրոֆեսոր Լ. Խաչիկյանը սույն ձեռագրի հիշատակարանը զետեղել է իր «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» եռհատորյակի Գ հատորում (Երևան, 1967, էջ 281)՝ քաղելով Բարխուդարյանցի հիշյալ աշխատությունից:

17 (Հատոր Բ, էջ 344). «Տէր Գրիգոր Գ (կաթողիկոս Աղուանից). յիշատակի սա ի յիշատակարանի Յայսմաւուրի միոյ, գրելոյ ի թուին ՌԸ (1559), իսկ յամի 1573 ուրանայ զհաւատ իւր»: Մատենադարանի № 4477 ձեռագրի հիշատակարանում, որն, ի միջի այլոց, թերթ ընկած լինելու պատճառով մնում է թերի, կարդում ենք. «Արդ եղև զրաւ գրելոյ Այսմաւուր այս ի թուականիս Հայոց ՌԸ (1559) ամի, ի կաթողիկոսութեան ..... (քերված) իսի, ի յերկիրս Ջարաբերդու...»: Կաթողիկոսի անվան քերված մասի վերևում, տողամեջ, այլ ձեռքով ավելացված է՝ «Յոհան»: Հակված ենք կարծելու, որ նախապես գրված է եղել «[Գրիգոր]իսի» և Շահխաթունյանցը հենց այս ձեռագիրը ունկատի ունի: Այն Էջմիածնի նախկին գրատան «Գևորգյան» կոչված հավաքածուի ձեռագրերից է (№ 572) և Էջմիածին է մուտք գործել անցյալ դարի 90-ական թվականների կեսերին:

18 (Հատոր Բ, էջ 344). «Տէր Յովհաննէս Ը (կաթողիկոս Աղուանից). յիշատակի սա ի ձեռագիր մագաղաթեայ Աւետարանի միոյ յիշատակարանի յերկրորդումն կազմի նորա ի թուին ՌԻԷ (1578), իսկ բուն գրչութիւն Աւետարանին յամի 1337...»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 361, Էջմիածին № 368, Մատենադարան № 212:

19 (Հատոր Բ, էջ 345). «Տէր Գրիգոր Դ (կաթողիկոս Աղուանից)... յիշատակի սա և ի յիշատակարանի ձեռագիր Շարակնոցի միոյ, գրելոյ ի թուին ՌՃԱ (1652)»: Այն Էջմիածնի նախկին գրատան ձեռագրերից է. Կարենյանց № 1586, Էջմիածին № 1624, Մատենադարան № 1626:

20 (Հատոր Բ, էջ 345). «Տէր Պետրոս Գ (կաթողիկոս Աղուանից)... յիշատակի և յիշատակարան Մաշտոց գրքոյ միոյ եղելոյ ի թուին ՌՃԺԱ (1662)» :Այն Օշական գյուղի ս. Մեսրոպ եկեղեցու ձեռագրերից է՝ արձանագրված Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի «Ցուցակ ձեռագիր գրոց և յիշատակարանաց նոցին եղելոց ի քաղաքս և ի գիւղս Երևանայ թեմի... 1903» անտիպ աշխատության մեջ (№ 14): Ձեռագիրս Մատենա-

դարան է մուտք գործել 30-ական թվականների սկզբներին, Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից Օշականի եկեղեցուց բերված չորս այլ ձեռագրերի հետ միասին (արդի № 6688):

21 (Հատոր Բ, էջ 356). «Արձանագրութիւնք աշխարհին Աղուանից, զորս ժողովեաց... Եսայի կաթուղիկոս..., յորոց գրուածոց առեալ մեր, դիցուք աստեղն...»: Խուքը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է Շահխաթունյանցի իսկ ձեռքով 1822 թվականին Գանձասարի վանքում հեղինակային օրինակից (1718) կատարված ընդօրինակությանը: Այն Մատենադարան է մուտք գործել 1938 թվականին Ախալցխայից բերված մի շարք ձեռագրերի հետ միասին (արդի № 9923):

Ցարադրանքից հետևում է, որ նշված 21 ձեռագրերը պատկանել են հետևյալ հավաքածուներին.

ա) Էջմիածնի նախկին գրատան հին հավաքածու—15 (№№ 1—7, 9—12, 14—15, 18—19):

բ) Էջմիածնի նախկին գրատան «Գևորգյան» հավաքածու—1 (№ 17):

գ) Տաթևի գրատան հավաքածու—1 (№ 8):

դ) Վարդաշենի ս. Աստվածածին եկեղեցու հավաքածու—1 (№ 16):

ե) Օշականի ս. Մեսրոպ եկեղեցու հավաքածու—1 (№ 20):

զ) Հովհ. Շահխաթունյանցի անձնական հավաքածու—1 (№ 21):

է) Պատկանելությունն անորոշ—1 (№ 13):

Արձանագրված 21 ձեռագրերից 18-ը (№№ 1, 3—12, 14—15, 17—19) այսօր որոշակիորեն գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 3-ի (№№ 2, 13, 16) ուր գտնվելն կամ ինչ եղած լինելն առայժմ հայտնի չէ:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆԿ ՀՈՎՀ. ԵՊՍ. ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՑԻ «ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ...» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№№ ը/կ	Շահխաթունյանց		Մատենադարան	№№ ը/կ	Շահխաթունյանց		Մատենադարան	№№ ը/կ	Շահխաթունյանց		Մատենադարան
	Հատոր	էջ			Հատոր	էջ			Հատոր	էջ	
1	Ա	49	451	8	Բ	257	6271	15	Բ	330	1725
2	Ա	60	—	9	Բ	290	221	16	Բ	344	—
3	Բ	129	356	10	Բ	290	1512	17	Բ	344	4477
4	Բ	200	1039	11	Բ	295	338	18	Բ	344	212
5	Բ	217	829	12	Բ	296	2029	19	Բ	345	1626
6	Բ	217	1330	13	Բ	326	—	20	Բ	345	6688
7	Բ	217	1924	14	Բ	330	1531	21	Բ	356	9923